

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Պ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հասարակ 40 փարսյ է : — Պոլիս բաժանորդ ըլլալ ուղորդ մէկ արծաթ Մէճիա պիտի վճարէ 400 թուոց համար իսկ դաւաճոց մէջ 25 դր, դարձեալ 400 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման առջը 40 փարսյ է մէկ անդամի համար : — Արագրի ս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրու թիւն պէտք է բողոքի առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս : Առաւորիչ եկեղեցւոց վարի գրանը կից հոր Գրատունը :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

կլտեմք թէ՛ Սահմանադրութեան վերաքննութիւնն աւարտած ըլլալով, խառն ժողովը մտադիր է 2—3 շաբաթէն ընդհանուր ժողով հրահրելով անոր ներկայացունել :

— Երկրութեամբ կլտեմք թէ՛ հըրածարեալ սրտաբխարքը, կայտերական բարեխնամ կառավարութեան կողմանէ իրեն շնորհուած 5000 դուրոշ ամսականէն մաս մը — ազէկ չը գիտցուիր թէ՛ սրչափ է, բայց՝ կըսուի թէ՛ 1300—2000 դուրոշ ըլլալով է — բարեհաճեր է ազգային Հիւանդանոցի պատասխարեւոց շնորհել ամսէ ամիս :

Եթէ ստոյգ է այս լուրը, Պոլս սրբազանը սյապէս քիչ մը անբաժ կըլլայ իւր՝ վերաւորած ազգին ցուելը :

— Իսան ժողովն իր շորաթական նիստն երէկ Ղալաթիա ըրա : Խորհրդարանին դարան ա եկեղեցւոյն բակը Աղթամարցի ազգայնոց բաղմութեամբ լցուած էր, որոնք միաբերան կաղապակէին և Աղթամարոց կաթողիկոսական խնդրոյն վերջանալը կրահանջէին : Ժողովը տեսնելով

որ ամեն յորդորանք լսելի չըլլար, Տեղապահ Սրբազանին յանձներ է համառել զանոնք : Հետևաբար՝ Նորին սրբազնութիւնը եկեղեցի իջնելով, ժողովոց բաղմութիւնը, և հայրադար յորդորելով ծանոց թէ՛ Աղթամարոց խնդիրը անպատճառ ընդհ. ժողովոց պիտի մատուցուի, որ մօտերս պիտի դաւանարի Սահմանադրութեան խնդրոյն աւթիւ :

— Հինգ շաբթի օրը Գումկաթիւի Առաւորչոց ազգական վարժարանին մասնաւոր քննութիւնն եղաւ ի ներկայութեան ամեն Տեղապահ Ս. Հօր և ուրիշ պատուաւոր անձանց : Աշակերտահեաց ուսումնական պատասխաններն ու ձեռագործներն և մասնաւորապէս օթեմարէ մը Նորին սրբազնութեան և ներկայ եղողներուն մեծ գոհունակութեան պատճառ ըլլալով, շնորհակալութիւն մատուցեր են վարժարանին անօրէն արժ. Տ. Սուքիաս քահանային, և դասատուոց՝ որք են Տ. Մեարաբկ և Տ. Սարգիս շնորհապարգքահանոցք :

Ռւրաթմութեամբ կլտեմք թէ՛ քիչ օրէն տիկնայոց խնամակալութիւն մը

պիտի հաստատուի յիշեալ վարժարանին համար :

—Թէքիրտաղի առաջնորդ գեր . Թադէոս եպիսկոպոսն հրաժարեր է յիշեալ վիճակին առաջնորդական պաշտօնէն :

—Խառն ժողովն Գալու քէհեապի օգնական կարգեր է յարդոյ վարդան աղան , որ ուրիշ առեներ ալ գտնուած է նոյն պաշտօնին մէջ :

—Գեր . Զարպեանց սրբաղանք նախորդ ամսոյն 22ին իղիք հասնելով , տեղւոյն ազգային վարչութենէն իր բարձր աստիճանին արժանաւոր յարնօք ընդունուեր և մէկ քանի ժամ մնալէն յետոյ իր ճամբորդութիւնը շարունակեր է : Նորին սրբաղնութիւնը խոստացեր է ի վերադարձին երկու շաբաթի չափ իղիք մնալ :

— . . . Խմբագիր

« Սրադրոյդ մէկ քանի թուոյ մէջ իղմիտի վտի—առաջնորդ Նիկողայոս եպիսկոպոսի վրայ յօդուածներ կարդալով , մեծ ցաւ զգացինք :

Արդեօք , սակէց յառաջ Ակնոյ վիճակին առաջնորդ գտնուող Նիկողոս վարդապետն է ամբաստանեալն :

Արդեօք , եպիսկոպոս ըլլալէն ետեւ Ակն գալուն , մէկ անձի մը տունը շուր վաղցունելու համար՝ 5000 դուրուշ աւնող և մայր եկեղեցւոյն հիմերը քակելով շարն անցնելու հրաման եմ ըրեր ըսող Նիկողոս եպիսկոպոսն է :

Արդեօք , այս շուրին անցնիլը արդ իրելու համար ժողովուրդէն 2000 հոգի ոտք երած ասեան , « հրաման եմ ըրեր պիտի անցնի , չէ թէ շուր՝ այլ « բողբ » անդամ անցնուել պիտի աստ » ըսող Նիկողոս եպիսկոպոսն է :

Արդեօք , ժողովուրդը այս խընդրոյն համար կառավարութեան խընդիր մատուցանելով բողբած ասեանը , կառավարութեան երթալով « եկեղեցին իմ հրամանն իտասի է , ես հրաման եմ ըրեր » ըսելով , Աստուածածնի շաբաթ իրիկունը շլթացակապ բանտարկել ատուող եպիսկոպոսն է :

Արդեօք , ազգասէր իշխանի մը բարեխօսութեամբ , ժողովրդեան քանտէն արձակուելուն վրայ բողբելով խարբերդի կուսակալին գիր գրող և « Հայոց ազգը կառավարութեան գուռը կիսեց ու բանաարկեալներն առաւ » ըսելով ժողովուրդը մատնող , և հետեւեալ կիրակի օրը Ս . Գասարազ մատուցանող Նիկողոս եպիսկոպոսն է :

Արդեօք , կուսակալին կողմանէ քանի մը զօրք միւսաշար որոշուելով , յիշեալ ազգասէր աղային մէկ քանի աղքատաց հետ խարբերդ տարուելուն , և մէկ քանի ամիս դատի համար թափառելուն պատճառ եղող Նիկողոս եպիսկոպոսն է :

Արդեօք , վերջապէս ժողովուրդն 150000 դուրուշի չափ ծախք ընելու պարտաւորող և ջրին ճամբան եկեղեցւոյն մէջէն վերցունելու համար ժողովուրդը (թէև յաջողեցաւ) մեծամեծ դժուարութեանց հանդիպեցունող Նիկողոս եպիսկոպոսն է :

Արդեօք , Ակնոյ առաջնորդ գրանուած ասեանը 15 օրն անգամ մը եկեղեցի իջնալ , գալրատան ամենին հոգտանող , և « տիրար եմ » ըսելով պահք չլրահող Նիկողոս եպիսկոպոսն է :

Արդեօք , Ակնոյ առները այլերութեան գացած ժամանակը , « Ինչո՞ւ ընտանիք ինէ կիսալոյն , Պօլիս

այս ստորութիւնը չկայ » ըսող Նիկոլաս եպիսկոպոսն է :

Արդեօք, ակնյուղոյ գժգոհութիւնները տեսնելով, կեղծ պատճառով ինքզինքը Պօլիս նետող Նիկոլաս եպիսկոպոսն է :

Արդեօք Ակն եղած ասեմը իզուտ մը ստորագրութիւն դնող, Պօլիս գալուն իւր ստորագրութիւնը ուրացող, և ստորագրութեան իրն ըլլալը ուրիշներէն հաստատուած ասեմն « Այն, ստորագրութիւնը իմն, բայց դարձէն անդէկութիւն չունիմ » ըսող Նիկոլաս եպիսկոպոսն է » :

—Անկողմնասիրութիւնը պարտք կը դնէ մեր վրայ հետեւեալ նամակը հըրատարակելու, որ Մաղլմեան Առաքել վարդապետին ստորագրութիւնը կը կրէ, պարունակութեան նայելով յիշեալ վարդապետը պէտք է որ հաստատէ թէ իրօք Մաղլմեան, Արապկեր, Ակն, Բալու, Խարբերդ, Չմըշկէզէ և ասոնց բոլոր գիւղերը միւֆէթի թիշու թիւն ընելու արտօնադիր ունեցեր է, թէ Մամնայու թաղակահայ հետ էյլնիշ եղեր է :

Արժանայարդ թաղական աղայք Մամնայու

Այս երեկոյ ծագ գիւղը պիտի մընամ, վաղը տէրն կամենայ Միատուն գիւղը գալու եմ. բայց թէ որ Անշրդեցիք թող տալու ըլլան. որովհետև Պարտիարքարանէն Մատրազանէն հըրամանող իր եկու նուաստութեանս միւֆէթի թիշու թեան, որ Մաղլմեան, Արապկեր, Ակն, Բալու, Խարբերդ, Չմըշկէզէք և ասոնց բոլոր գիւղերը մեզի յանձնուեցաւ. և Խարբերդու բոլորին հըրամանող իր եկաւ մեզի

համար. որ ինչ որ իֆատէ ընելու ըլլամ լսէ և իճրան ընէ :

Ողջ լեբուք խնամօք տեսուն
24 օգոստ. 1866 Ծագ գիւղ
Պատր. փոխանորդ
Ս. Վ. Մաղլմեան

ԽՍՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Եգիպտոսէն մայրաքաղաքիս անգլիական դեսպանատան եկած հեռագրաց նայելով, Անգղիոյ գահաժառանգ իշխանն ու իշխանուհին այսօր նաւ մտած ըլլալու են մայրաքաղաքս գալու համար :

—Սթամաթիլլու էֆէնտին ոստիկանութեան ժողովին առաջին թարգման ընտրուեր է :

—Աթէնքէն եկած հեռագիր մը կհաստատէ թէ՛ Փարիզի հելլենական դեսպան Պ. Բանկայէ մայրաքաղաքին հելլեն դեսպան ընտրուած ըլլալով անոր պիտի յաջորդէ բրէնն Կրէկուար Խիսիլանի՝ որ երբեմն վիէննա էր սոյն պաշտօնով : Նոյն հեռագիրը կժանուցանէ նաև թէ՛ Սանթօրինի պատգամաւոր Պ. Չանիս Եգիպտոսի հելլեն հիւպատոս ընտրուեր է, և յառաջիկայ կիւրակէ օրը հելլեն խորհրդարանը պիտի լուծուի ելեր :

—Նաբոլիէն լուր կուտան թէ տեղական կառավարութիւնը քանի մը խաղացի դրամանենդներ ձերբակալ ըրեր է, որոնց քով խաղական և տաճիկ դրամներ կգտնուին եղեր : Ասոնք խաղիւց մէջ բաւական ժամանակէ ի վեր իրենց արուեստը կշարունակեն եղեր, և կկարծուի թէ Տաճկաստանի մէջ ալ ընկերներ ունեցած ըլլան :

— Իրզդոնէն ինաց կուտան թէ՛ ընտրողական օրինաց դէմ՝ յայտարարութիւններ ընելու համար ժողովրդական յանձին գումարումներ եղած են, և այսպատճառաւ մեծ յուզմունք կտիրէ քննաքնն մէջ :

— Պէրլինէն կատուդեն թէ՛ Միւնիխի բրաւտիական դեռույթներ ճաճ կատուանի դեռույթն ընտրուած է :

— Եւրոպական լրագիր մը յոյս կուտայ թէ մտաւատներն Գաղղիա Պելճիգայի հետ բանակցութիւններ կընէ քաղաքական և վաճառականական միութեան մը համար :

— Միզդիոյ խորհրդարանին մէջ ապիստին կշարունակուի իրլանդացի բողոքական եկեղեցւոյն բարձմանը նկատմամբ եղած ծրարայն վրայ վեճը : Բայց կյուսայնի որ չուսով վերջանայ :

Իրէսթօնի բանակակի գործարանատէրք գործ չըրարուն պատճառաւ չուզելով իրենց գործարաններուն վարձքը տալ, շատ թշուառութեան մէջ ինկեր են սոյն գործարարք :

— Միզդիական զօրքը Հարիշաստանէն դառնալէն յետոյ, երկիրը անիշխանութեան մէջ մնալով զանազան ցեղապետներ թագաւորելու ելեր, և ինքզինքնին եղիպոտոսի Ղըզտայ պատրիարքէն օրհնել ստլով վաւերանալու շանքեր կրնեն եղեր :

— Փարիզի Լա Ֆրանսա լրագիրը ծանուցած է թէ՛ 830 հողար հանովրացիք եւրոպական մեծ աերութեանց բողոքագիր մը մատուցած են Հանովրի թողաւորութեան երկիրներուն Բրուսիոյ հետ միամտութուն դէմ : Այս հրատարակութեան դէմ խօսելով Պէրլինի մէջ լրագիրը, գիտողութիւն

կրնէ թէ՛ Հանովրի մէջ այնչափ ժողովուրդ չգտնախր, և թէ՛ յիշեալ բողոքագիրը ստորագրուած ըլլալու է կաթ ուտող ազաքներէն ալ :

— Թունուզէն հեռուեալը կգրեն : « Համեմա եւ Պէն—Նէզիա երկու ցեղեր երկար ատենէ ի վեր ատելութիւն ունենալով միշտ թշնամութիւններ կրնէին իրարու, որով երկիրներքին անգորութիւնը կխտովեր : Թունուզի պէր ուղեւով զասնը հաշտեցունել, երկու ցեղերուն գլխաւորները կանչել կուտայ : Պէն—Նէզիոի գլխաւորները իրենց մարդիկներովը ամենէն առաջ կուզան իրենց համար առաջուց սրչեալ տեղ մը կրնալին վրաններով : Փանի մը ժամէն Համեմա ցեղին գլխաւորները իրենց բազմութեամբը գալով կսկսին վիճիլ Պէն—Նէզիաները զուրս վանելու համար իրենց բնակած տեղէն : Այս բանակարը սաստիկ պատերազմի կրիսուսի, ուր երկու ցեղը քարով, հրացանով կմարանչին, և զօրաց միշտամութեամբ հաղիւ իրարմէ կրաժնուին : Համեմա ցեղէն 70 հոգի կը դատապարտուին 500 զաւաղանի հարուածոց : Եւ երկու ցեղին գլխաւորները կը բանաորկուին : Պէն—Նէզիանեանք պատերազմէն ետքը կքախչին, առանց մտիկ ընելու կառավարութեան, որ զիրենք կըստիպէր որ դառնան դան :



Կէտիկ—Վաչայի Օսմանիյէ թաւրանին մէջ այս գիշեր « Խաղացողի մը կենացը երեսուն տարին » հաշակար թատերգութիւնը պիտի ներկայացուի, որ երեք արարուածէ և վեց պատկերներէ կըստկանայ : Այս ներկայացման համար կանխու ամէն պատրաստութիւն եղած ըլլալով, կը յուսամք թէ ներկայ գանաւորները մեծապէս գոհ պիտի ըլլան :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐՆ
Հ. Ս. ԱՆՆԱՆՆԵԱ
ԵՊՅԳՐՈՒԹԻՒՆ Ա. Տ. ԲԻԻՐԲՃԵԱՆ